**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՎՁՄ-ՄԱԾՁԲ-01/25-1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Եղեգնաձոր

<< 04>> օգոստոսի 2025թ.

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Հարությունյանի, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և և ԱՁ Արման Սողոմոնյալը, ի դեմս տնօրեն Ա.Սողոմոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից՝ հիմք ընդունելով 2025թ. հունվարի 20-ին կնքված ՎՁՄ-ՄԱԾՁԲ-01/25 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Կատարողը պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել սույն Համաձայնագրի N 1.1 հավելվածով նախատեսված աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Կապալառուի կողմից կատարման ենթակա Աշխատանքների ընդհանուր գինը կազմում է 950000 ՀՀ դրամ / ինը հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ/, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի N 1, N 1.1 և N 2 հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀ ֆին. Նախ. Գործառնական վարչ.
ՀՎՀՀ 08918507
Հ/Հ 900351051025
ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող

------------------------------Ա.Հարությունյան

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
ԱՁ Արման Սողոմոնյան
ՀՀ Վայոց ձորի մարզ Ք.Եղեգնաձոր
Միկոյանի8/1
ՀՎՀՀ 83766151
ՀՀ 220029675869000
Ագբա բանկ Եղեգնաձորի մասնաճյուղ

Տնօրեն ------------------Ա.Սողոմոնյան

Հավելված N 2
«04» օգոստոսի 2025թ. կնքված
ՎՁՄ-ՄԱԾՁԲ-01/25 ծածկագրով համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| չափաբաժնի | ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50311120/1 | Ներկայացուցչական ծառայություններ | 150000 | 150000 | 150000 | 300000 | 300000 | 300000 | 300000 | 750000 | 750000 | 950000 | 950000 | 950000 | 950000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

** Սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀ ֆին. Նախ. Գործառնական վարչ.
ՀՎՀՀ 08918507
Հ/Հ 900351051025
ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող

------------------------------Ա.Հարությունյան

**ԿԱՏԱՐՈՂ**
ԱՁ Արման Սողոմոնյան
ՀՀ Վայոց ձորի մարզ Ք.Եղեգնաձոր
Միկոյանի8/1
ՀՎՀՀ 83766151
ՀՀ 220029675869000
Ագբա բանկ Եղեգնաձորի մասնաճյուղ

Տնօրեն ----------------------Ա.Սողոմոնյան